

Անմիջապես իւր խափանման

Կ'ընդունէր նա Դրոնէն հրաման:

Այսպէս են մեր թատրոնի հեղինակներէն շատերն ալ. իրենց ուզածին պէս կը ներկայացունեն անձերը եւ կարծես թէ մեծ գործ տեսած են: Արշակ մը, Հայկ մը, Սանդուխտ մը պէտք է այնպէս ներկայացնուի՝ ինչպէս որ է, եւ ոչ թէ ինչպէս որ կը փափագին արգոյ հեղինակները:

**

Դեսպանախորհուրդն այսօր բացուեցաւ Պերլին: Այս գիշեր Պիսմարք իշխանին տունը գինի պիտի խմուի:

Թուրք կառավարութիւնն ալ անշուշտ այս երեկոյ հեռագրով *անուշ հրամեցիք* պիտի ըսէ գինի խմողներուն, որք գինիին վրայ պիտի կլլեն անշուշտ... Եանիան:

**

5 Յունիս

Ինչպէս *Մեղու* - ի, *Մշակ* - ի, *Փորձ* - ի արգելուած է Պօլիս մտնելն՝ նոյնպէս նաեւ արգելուած է Խտիվի *հարէմ* - ին:

Միթէ այս *հարէմ* ալ Թուրք քաղաքականութեան վնասակար յօդուածներ 'ի լոյս ընծայած է, որ Պօլսոյ մուտքն արգելուած է իրեն: Յայտնի չէ: Խտիվի որդին կը մերժէ իր մայրերը, Բ. Դուռն չուզեր ընդունել զանոնք եւ կիներով բեռնաւորուած նաւը քաղաք մը կը փնտռէ՝ ապրանքը դուրս հանելու համար:

Նկատողութեան արժանի է որ այս *հարէմ* - ին Պէշիքայի առջեւ սպասելը Հնդկաստանի ճամբուն դպած չէ. եթէ դպած լինէր՝ Անգղիոյ խորհրդարանի մէջ հարցումները իրարու կը յաջորդէին.–

–Խտիվի *հարէմն* Նաբօլին ինչո՞ւ մեկնեցաւ:

–Ինչո՞ւ համար Պէշիքա գնաց:

–Իտալիոյ կառավարութիւնն ինչո՞ւ թող չտուաւ, որ այդ կիներն իր երկրին մէջ բնակին: Իտալիոյ կառավարութեան այս ընթացքն Անգղիոյ թագուհւոյն աշխարհավարութեան վնաս մը չի՞ բերեր:

Եւ կառավարութիւնն այս հարցումներուն պատասխանելով՝ խնդրոյն վրայ լոյս կը սփռէր եւ ամենուն հետաքրքրութիւնը կը փարատէր: